

ԱՂԱՎՆԻ



ԱՐԵՎԱԾԱՂԻԿ

891.995

Ա - 47

ՄԵՏԶՐԱՏ

891.99 ժ

4-47

Ա Ղ Ա Վ Ն Ի

ս չ .

# Ա Ր Ե Վ Ա Ծ Ա Ղ Ի Կ

(ՌՈՒՍ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ)


ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նկարները Ս. ԱԼԵԿՍԱՆԵԱՆԻ

Պ Ե Տ Տ Ր Ա Տ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1937

- 5 FEB 2013



—Մայրիկ, ինչո՞ւ ամեն ուր  
Ծաղիկներն այս վոսկեվոր,  
Կարոտանքով անմեկին  
Միշտ նայում են արեվին:

Ինչո՞ւ ամեն իրիկուն,  
Յերբ արեվն է մտնում քուն,  
Գիշերն ամբողջ գլխահակ  
Միտք են անում շարունակ:

Մեկնիր, մայրիկ թանկագին,  
Նրանց դադանիքն անմեկին,—  
Ծաղիկներն այս լուսատենչ,  
Ո՞վ է ցանել դաշտի մեջ...

—Ծաղիկներն այդ լուսատենչ,  
Տերեվներով լայն ու պերճ,  
Այս ստեպի հետ կապված  
Ունեն գրույց մի անցած:



1577

38

Հին և գրույցն այդ տրտում,  
Բայց գյուղացու խոր սրտում,  
Մնում և նա զեռ անմար  
Ինչպես մի շահ բոցավառ:

Այս ստեպում լայնածիր  
Կային գյուղեր ցան ու ցիր:  
Կային ջրեր հորդառատ  
Յե՛վ արտոներ ծաղկաշատ:

Ստեպում լայն ու արձակ  
Արտեր կային անքանակ,  
Արտեր՝ հասուն — վոսկեքիստ,  
Ծովի նման անհանգիստ:

Արտաներում կային բյուր  
Գառ ու մաքի սեվաթույր,  
Արաբական նժույզներ,  
Ու նախիրներ կաթնաբեր:

Վոսկե արտերն այդ բոլոր  
Նախիրները բյուրավոր, —  
Վողջ բարիքը այդտեղի  
Պատկանում էր մի զեպի:

Դեմն ապրում էր անտառի  
Իր ամրոցում անառիկ,  
Վորի մուտքը թշնամուց  
Ոճերն էյին պաշտպանում:

Իսկ ընդարձակ ստեպում,  
Արեպի տակ որն ի բուն,  
Մնում էյին անդադար  
Ճորտ գյուղացիք սովահար:

Բանում էյին անդադար  
Ճորտ գյուղացիք սովահար:

Ճակատներից նրանց ճորտ,  
Վար էր թափում քրտինքն հորդ,  
Յե՛վ արտերը, շողշողուն, —  
Այդ քրտինքն էր փոփոզում:



Դեռ նրանց քրտինքով  
Կրանում էր բերքը ծով,  
Իսկ ճորտերը քրտնաշան,  
Մնում էյին ձեռնունայն:

Ու փայտաշեն գյուղերում  
Կանայք սոված ու տրտում,

Յե՛վ մանուկներն անլեզու  
Չոր հաց եյին աղերսում:

Չոր հաց եյին աղերսում...  
Իսկ չար դե՛վի ամրոցում,  
Լիութեան ու քեֆի մե՛ջ  
Փոթորկում եր կյանքը պերճ:

Դրսում ձմեռն եր ճերմակ,  
Իսկ ստեպում ընդարձակ  
Չմռան ցրտի նման սուր  
Սո՛վն եր շրջում ամենուր:

Հյուժժվում եյին խիստ սովից  
Ճորտ գյուղացիք կորովի,  
Ու աղքատիկ գյուղերում  
Ոչախներն եյին մարում:


Բայց գյուղացին աշխարհում  
Միշտ գլխիկոր չի մնում,  
Ու ճորտերն ել մի անգամ  
Դե՛վի դեմ խիստ դայրացան:

Ու գայրույթը՝ Դոնի հորդ  
Ջրերի պես աղմկոտ,  
Վոտքի հանեց վողջ յերկրի  
Մուժիկներին քաջարի:

— Գնանք, ասին, մեր զենքով  
Խլենք հողի բերքը ծով,  
Գտնենք ճամբան լավ կյանքի,  
Ապրենք առանց տանջանքի:

(Կա մի որենք ստեպում,—  
Յերբ վոր կռիվ են գնում,  
Կովից առաջ անսպասան  
Պիտի բանան լի սեղան:

Ուրախանան քեֆ անեն,  
Մրի կենացը խմեն:  
Վոր այդ սուրբ շարունակ  
Կինի կտրուկ, անխորտակ):



Այդ որենքին համաձայն  
Բաց արեցին լի սեղան,  
Ու նստեցին խնձույթի  
Քաջ տղերքը այդ գորքի:

Յե՛վ աղբյուրի պես վարար,—  
Հոսեց կվաս ու արաղ,  
Ու մինչ կապույտ լուսաբաց  
Բալալայիկան մզկտաց:

Նվազի հետ քաղցրաձայն,  
Զինվորները խոստացան,  
Վոր կը հազթեն իշխողին,  
Տեր կը գառնան թուխ հողին:

Հետո թուան հեծան ձի,  
Սուր ու նիզակ զնգացին  
Ու բանակը ապստամբ  
Բռնեց ստեպն ափից-ափ:



Իր հպատակ ոձերի  
Բանակներով թունալի,  
Կռվի յերավ նրանց զեմ  
Իշխող զեք չարազեմ:

Ինչքան ասպար, սուր ու ձի  
Արյան ծովում սուզվեցին,  
Յե՛վ զիերով ցիր ու ցան,  
Ցին ու ազոսով լիացան:

Մթնեց ստեպն անարեյ  
Ու սեյ հողի փոխարեն,  
Մանն մարդ իր կրծքի տակ  
Վերք ստացավ ու նիզակ:

Իսկ հարսները լուսերես  
Մնացին խեղճ վորբի պես  
Սպասեցին որ-զիշեր  
Զինվորներին անվեհեր:

Սպասեցին մի տարի,  
Մինչև սարի կատարից  
Ծագեց արեփն հուրհուրան,  
Անցավ սարսափը ձմռան:

Ծաղիկներով գույնզգույն  
Զուգվեց ստեպը սիրուն,  
Ու արոտներն անսահման  
Հազան կանաչ սարաֆան:

Հողը մնաց անմշակ  
Ու գիծ քամին սանձարձակ  
Այդ արտերում անբերրի,  
Յերգեց կարոտն հարսների:

Յերգը նրանց ախանջում,  
Թվաց ձիու վրնջյուն,  
Բայց չզարձան այդ տարի  
Զինվորները քաջարի:

Հետո հարսները բոլոր  
Վշտահար ու սգավոր,

Վորոշեցին, փոր գնան  
Նրանց տեղը իմանան:

— Գնանք, ասին, փորոնենք,  
Գտնենք նրանց, տուն բերենք,  
Ու մագերից նրանց շեկ,  
Ճամբի փոշին թոթափենք:

Նրանք անցան դաշտ արտեր  
Աչքերի մեջ վիշտ ու սեր,  
Յե՛վ սրտերի մեջ ամպոտ  
Հազար յերազ ու կարոտ:

Քանի գիշեր սեվավոր,  
Ծածկեց ստեպն հեռավոր,  
Բայց չգտան փոշ մի տեղ,  
Զինվորներին փոսկերեղ:

Այդպես մի որ, յերբ նրանք  
Շրջում էին գլխահակ,  
Իուրս սլացավ անտառից  
Մի սեվաբաշ կայտառ ձի:

Մեջքի վրա մի հին թամբ  
Աչքերի մեջ տրտում ամպ,  
Զին վրնջաց կարոտով,  
Հողը փորեց գույգ վոտով:

Կրծեց սանձը յերկաթե,  
Աչքից արցունքը կաթեց՝  
Ու արցունքի մեջ պղտոր  
Շողաց վիշտն իր ահավոր:



Զիու բերած վիշտը մեծ,  
Վողջ ստեպում տարածվեց,—  
Ու հարսները միասին,  
Իրանց բախտը սգացին:

Հետո տխուր ու տրտում,  
Ցրիվ յեկան արոտում,  
Արտավերով դառնաղի,  
Իարձան մի մի վառ ծաղիկ:

.....  
Ծաղիկ դառած ամեն հարս,  
Արեգակին փոսկեվարս,—

Իր կտրիճն ե համարում  
Տենչում ե միշտ ու սիրում:

Կանչում ե միշտ, աղերսում  
Վոր չմնա նա գրսում,  
Գա ստեպի հողն հերկի,  
Ձիրիդ խաղա ու յերգի:

Բայց արեվը վոսկեհեր  
Նրանց սիրուն անտարբեր,  
Թողած ստեպն անմշակ—  
Քուն ե մտնում սարի տակ...

Ծաղիկներն ել լուսատենչ,  
Մենակ կանգնած զաշտի մեջ,  
Միտք են անում ու տրտմում,  
Վառ կարոտը սրտներում...

Միտք են անում ու տրտմում,  
Բայց ընդարձակ ստեպում,  
Հիմա ամեն գյուղացի  
Տերն ե արդեն իր հացի:

Ու չունի ցավ, չունի վիշտ,  
Չունի տերեր ամբարիշտ,  
Հաղթել ե նա իշխողին,  
Ու տիրացել վողջ հողին:

Գառ. խմբադիր՝ Գ. Սարյան  
Տեխ. խմբադիր՝ Մն. Գասպարյան  
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան

1379  
38

Գլավիտի լիազոր Կ. 4644. Հրատ 4307.

Գառվեր 1173. Տիրած 3000.

Թուղթ. 62x94 Տպագր. 1 մամուլ.

Մեկ մամ. 30720 նրշ. Հեղինակային 3/4 մամ.

Հանձնված ե արտադրության 2 հոկտեմբերի 1937

Ստորագրված ե տպագրության 8 դեկտեմբերի 1937

Գինը 50 Կ.





ՀՀ Ազգային գրադարան




NL0396160

103

6580

9768 50 4mm.



АГАВНИ  
ПОДСОЛНЕЧНИК  
Гиз Арм. ССР. Ереван